

ՀԱՍՏԻ

Rédaction du Journal

«Travounk»

Varna

Vienne

Редакция Вл


Вестникъ

«Нравуникъ»

Варна

Գրողները ևս չեն տրոշիր

ՊՈՒԼԿԱՐԻԱ
ՊԱՅՄԱՆՆԵՐ
Տարեկան 8 Ձր.
Վեցամսեայ 4 Ձր.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Տարեկան 10 Ձր.
Վեցամսեայ 5 Ձր.
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2. Տօլ.
Վեցամսեայ 1. Տօլ.
ԿԱՆԻՍԻԿ
ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՍԵՒ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ ՎԵՍՆԵՐԸ

ԻՆՉՈՒ ԿԸ ՔԱՅԲԱՐՈՒԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ

Կովկասայ հրապարակագիրը մը չափ քիչ անգամ գոյնեղով կը պարզէ կովկասի հայ գործարաններուն քայքայման և գործաւորներուն ինքնակործանման պատճառները ու պարագաները։ Հրապարակագիրը իր ուսումնասիրութիւնը սա տողերով պատկեր կ'սկսի։

«Ազատագրական շարժման հովերը երբ մայր Ռուսաստանից և ռուսական ներքին նահանգներէ քիչ քիչ դէպի կովկաս վերջնիս արդիւնաբերական վայրերում լոյս ընկան Ռուսաստանից եկած ռուսներ և հրէաներ, որոնք աշխատեցին բաւելաւել կովկասեան բանւորներին պարտաւորութեան տնտեսական մասը ըստ իրանց կարծիքի։ Այդ նորեկ օտարները իրանց լընկերո՞ւ ճանաչեցին հայ յերթման տեղացի ռուս և հրէայ բանւորներին, ազատագրական հովերով տարվող երիտասարդների խորհրդով։

«Խաղաղ աշխատատեղերէն ժէջ սկսվեց հէնց առաջին քայլից պրօպանդանդան և հրաւերը դէպի գործադուլ և պահանջներ ինչպէս և սկսվեց կազմակերպվել բանւորական ներկայացուցչութիւն (կոմիտէ)։ Օսկայն, դժբաղդաբար, այդ պրօպանդանդան սահմանափակվեց հայ բանւորների վէջ։ Արանց շրջանակից դուրս չաւանդ։

«Այսինքն 1-ի տօնը կատարելու համար նախապէս բանւորական աշխարհում երբ գործադուլ էր յայտարարվում մի օրով, այդ գործադուլի առաջին նշանը պահանջվում էր տալ հայ ֆերմայից, եթէ հայերից արդարացի կերպով նկատողներ էին լինում, այդ օտար պրօպանդանդանները պատճառաւորում էին, թէ հայը գիտակից է, տեղացի է, թուրքերը թէ և տեղացիներ են, բայց տգէտ են, ռուսների հայրենիքը Ռուս

սահմանն է։ Կովկասի վրա ռուս պրօպանդանդան աչք չուներ և այլ նման դարձուածքներով հայերին էին առաջ գցում։ Եւ այդ բոլորի հետեւանքն այն եղաւ, որ հայ ֆերմաների համարեա բոլոր տեխնիքական արհեստները փակվեցին և հազարաւոր արհեստաւորներ դուրս չպրտվեցին գլխաւորապէս Մանթաշեանի ֆերմայից, Բայց մարդկանց գլուխները այնքան տաքացած էին, որ սեւը սպիտակից չէին կարողանում շոյել։

«Օտար ֆերմաների արհեստանոցները մնացին և միշտ ալ այսօր էլ կատարում են իրանց գործը։ Փակվեցին միմիայն հայերինը։ Որովհետեւ հայ Հնչակեան և Դաշնակցական սօսիալիստ բօրաւորները թելադրեցին հայ գործարատէրին ծանր պայմաններ ու պահանջներ առաջարկելու և միւս կողմէ իրենք ալ (այդ բօրաւորներին տեսնելով) սպառնալիքի տակ խոշոր գումարներ կորզելէ չի դադարեցան և հայ գործարանատէրը ու գրամատէրը ըստիպուեցաւ փակել կամ ծախել իր գործարանը և հեռանալ կովկասէն։ Բայց Ռուս, Թուրք և վերջի գործաւորի իրեն ազգակից կամ ոչ-հայ գործարանատէրերէն նոյն պահանջը չըրին, նոյն անտանելի վարմունքը չունեցան, և այդ շնորհիւ օտարները յաջողապէս կարողացան մրցիլ հայ ֆերմաներուն դէմ։

Կովկասայ հրապարակագիրը կը յարէ, «Ռուսաստանը՝ որ հազարաւոր հսկայ գործարաններ ունի, որոնց իւրաքանչիւրին մէջամբողջ Բալթիանի գործարաններուն չափ բանւորներ կը գործեն, երբէք կովկասի հայոց չափ չի մասնակցեցան քաղաքական գործադուլներու, եւ գիտէ՞ք դրա հետեւանքը ինչ եղաւ։

«Այն գործիքը, որ պատրաստվում էր կովկասում պուրը 10ր, Ռուսաստանի գործարանները աւելի մաքուր և լաւ պատրաստած և այն էլ կովկասի մէջ վաճառում են 7-8 ր»։

Այս վիճակին մէջ հայ թրքա-

կան կոտորածներու և գործադուլական խռովութիւններու հետեւանքով փակուած հայ գործարաններու տէրերն ալ հարկ չը տեսնէին կրկին բանալու ու կարգի դնելու իրենց գործարանները, քանի որ աւելի աժան գործիքներ կուգային Ռուսաստանէն, եւ ահա այն հայ արհեստաւորները որոնք 10-20 տարի աշխատանքով արհեստ էին սովորել, ահա կան 50-200 ր թոշակ ստացել այսօր պարագայ մնային»։

Կը հարցնէ հրապարակագիրը, «որու վրայ կը ծանրանայ բազմադամ ընտանիքի տէր հայ արհեստաւորի մեղքը, որ այսուհետեւ ոչ երկրպագործութեամբ կրնայ զբաղիլ, ոչ այգեպանութեամբ և ոչ ալ անասնապահութեամբ, մանաւանդ որ այդ վերջին զբաղումներու համար անհրաժեշտ է հող, որմէ զուրկ է կովկասի Հայութիւնը։

Այս հարցումին ինք կը պատասխանէ կովկասահայ հրապարակագիրը, այսպէս։ «Մեղաւորը անհեռատեսութիւնն էր որ ծնաւ ժողովուրդի տգիտութենէն, նա հետեւած ըլլալով անհեռատես բօրաւորներին տեսնելու սխալ քարոզներուն»։

Մեր կարծեօք նոյն աղէտը, ալ աւելի վտանգաւոր ըլլալու պայմանաւ, կ'պատէ թրքահայոց ևս եթէ այս վերջինները տգիտօրէն հետեւին այն անհեռատես բօրաւորներին որոնք կովկասէն ճակատան փոխադրուած են այժմ և տգէտ ու միամիտ խաւերու մէջ սկսել են արդէն իրենց պառակտիչ և աղիտաբեր որոշումները ցանելու համար հող գտնել։ Այդ միւսնոյն որոմները որ քրիստոնեայ կառավարութեան մը հովանիին տակ կովկասի մէջ ծանօթ հայ-թրքական կոտորածները առաջ բերին, ճակատան մէջ ալ սոսկալի է ընել, Հայոց համար նիւթապէս կործանումէ զտա հայկական բնաջնջումի մը տեղի տալու երկիւղը կ'ազգեն մեզ։

ՎԻԿՏՈՐԻԱ — ԱՂԱՆՈՒՐ

Միութեան հայրերէն Ա. Ղազիկեան ողբացեալ վեկտորիա Աղանուրի նոր քնարական երգերը թարգմանելուն առթիւ հետեւալ գողտրիկ գնահատումները և ծանօթութիւնները կը քաղէ հայ-իտալացի բանաստեղծուհի յիշատակին նուիրուած օտար հրապարակագիրներէ։

«Հայութեան այս չքնաղ բեկորը՝ իտալական գեղածիմաղ երկնային տակ երգեց, հառաչեց, սիրեց և հուսկ՝ անսղորմ հիւանդութեան մը զոհ եղաւ՝ դեռ իր ուժերուն կենսալիւր առուգութեանը մէջ, տանելով իր հետ գերեզման, զինքը պաշտօղ իր աճուսիքը ևս, որ անձնասպան եղաւ չկարենալով տոկալ անհուն վշտին։

Իտալական մամուլը անխտիր՝ հայ մամուլը ևս անտարբեր չըմնաց, ողբաց գողտրիկ ու վառվռառ և հանճարի մը տարածմամբ այս անհետացումը, և Բրոքի. Պոքրաֆուռի, խմբագիր Վերական Հոռմի հանդէսին՝ որուն կ'աշխատակցէր Աղանուր, իրեն նուիրեց Յունիսի պրակը ամբողջովին, որուն մէջ յիսունի չափ նշանաւոր գրագէտներ և գրագիտուհիներ որոնց մէջ կան նաև ֆրանսացիներ և սպանիացիներ, այժակ թէ՛ ոտանաւոր՝ իրենց ցաւը սևագրեցին, շեշտելով ներքա հանճարին խորութիւնը, անձին բարութիւնը, խառնուածքին զմայելի ճկունութիւնը, արուեստին մաքրութիւնը, մտածումներուն ազնուական վեհութիւնը, և իր շնորհալի գեղեցկութեան ու բարութեան քաղցրադաշակ ի վիճակումը։

Իտալացիներ կը գրէ. «Բախտը չունեցայ վեկտորիան ճանչնալու, և ու է անձնական յիշատակ զիս իրեն չի կապել, բայց արուեստագէտի անկեղծութեամբ և կնոյ գողտրիկ կուլում անհետացումը մեր երկինքներուն լուսապայծառ այս աստղին, և կը մաղթեմ որ փութով ազնուական յուշարձան մը՝ կազմուած Հոռմի մէջ՝ ըսէ բոլոր իտալացի քաղաքներով կրկնելուն, թէ գեղեցկութեան ինչպիսի հիանալի ներդաշնակութեամբ մը ճուրղած էին այս Ամենազնիւ

կնոջ մէջ Բարութիւնն ու Հանճարը:

Յովհաննա Պառէռ՝ դուստր Գաղղիոյ գեապանին ի Հռոմ՝ և հայ մար, մտերմութիւն Աղանուրի, գեղեցիկ յօգուած մ'ունի «Երազ և կեանք» խորագրով, որուն մէջ՝ ի միջի այլոց կ'ըսէ. «Մինչև իր վերջին (վայրկեանները՝ հիւանդութենէն ընկճուած թէև՝ ուրիշները կը մտածէր, ուրիշներուն օգնութեան կը հասնէր, կը թեթեւեղէր անոնց վիշտերը օտուտած ըլլալով ըմբռնողութեան հաղուստի և ճիւղով, Եւրոպր անոնք՝ որ ճանչցան իր գեղեցիկ, սիրուն աչքերը, պիտի յիշեն միշտ զայն: Սաստիկ կը սիրէր ծառերն ու ծաղիկները, իրեն և անոնց միջև տեսակ մը նմանութիւն զգալով»:

Էնրիքոյ Գառէլէնուովոյ նշանաւոր գրագէտը կը գրէ. «Ճատ անգամներ չի պատահիր որ երբ հեղինակի մը վրայ կը հիանանք տանջող կասկած մը կ'արթնայ մեր մտքին մէջ, և մենք մեղի կը հարցնենք.— Բայց իրաւապէս է ան՝ ինչպէս որ իր գրքերը մեզի կը ցուցնեն զայն»:

Անկեղծ է իր խանդին, իր արցունքներուն, իր տարփանքներուն, իր բարկութեանը մէջ— Եւ քանի՞ անգամներ երբ մանր պրպտեր ենք, ստիպուել ենք ըսելու թէ մարդուն և արուեստագէտին միջև անդունդ մը կայ, Վիկտորիա Աղանուրի մասին առանց վաւանելու կրնանք հաստատել՝ որ իր քերթածները հայելին են իր հոգւոյն աշխուհի խորութեան, իր սրտին անուշակ բարութեան: Մանաւանդ թէ պէտք ենք աւելցնել թէ իր մեծ սրտին մէկ մասը միայն, իր ընտիր հոգւոյն մէկ մասը միայն ի յայտ կուգայ իր գրողի գործէն, և թէ՛ թէպէտ վերջին ժամանակաց իտալական քնարական երգերուն լաւագոյններէն քանի մը հատ կը թողու նէ մեզի, ով ոչ անձամբ չճանչցաւ զայն, չի կրնար գնահատել արժանաւորագէտը:

Տոմէնքոյ Ձիւմբուրի Աղանուրը երիտասարդ հրաշալի յօդուածը հետեւեալ տողերով կը սկսի. «... Բարի տիկինը՝ զոր բանաստեղծութիւնը, Հայրենիքը, ամենքնիս այսպէս անակնկալ կերպով կորսնցուցինք: Մինչդեռ նէ ինքն հաւատք ունէր դեռ ևս ծաղկելու իր առողջութեան և արուեստին մէջ, իր ոտանաւորները կարգացող զինքը բարեկամ զգացող ամէն սրտի մէջ թողուց այնպիսի դառն կեկիծ մը, որ կարծես սփոփանք մըն է խօսիլ ներա մասին զինքը սիրող հոգիներու խուռն բաղմութեանը մէջ, սէր մը՝ առաջ եկած հի. ցումէ և համակրանքէ, յարգանքէ և հաճութենէ: Չկայ մէկը որ զայն ճանչցած ըլլայ և զգացած իր նկարագրին

զմայելի ճկունութեան, հանճարին խորութեան, գաղափարներուն վսեմութեանը մէջ, և իրեն կապուած չըլլայ հիացումով գրեթէ երանագիտութեամբ՝ ներա ուրիշ կիներէն այնքան տարբեր ըլլալուն, ըլլալով հանդերձ անոնց նման առաքինի, հանճարեղ և ազնիւ, իր մէջ՝ ընդհանրապէս բանաստեղծ միայն տեսնուած է. բանաստեղծը ամենանոր՝ քնքուշ և հզօր միանգամայն, որ գիտէր ըսել հոգւոյն բոլոր գաղտնիքները՝ հետզհետէ մարդ նազելի փափկութիւններով, և կրքին խոր խօսքութիւններով՝ ակնարկութիւններով, փայլակունքներով կամ անակնկալ և վսեմ յոյսներով: Բայց եթէ մէկը կարենար հետազոտել ներա զգացումը, թափանցել այն գաղտնիքներուն մէջ՝ զորս նէ կը ծածկէր խստօրէն, տեսնել յստակ այն սփիւքսի և վնուկի ուղեղին մէջ, պիտի ընծայէր կնոջ աշխուհականութեան ուրիշ կողմ մը, կամ աւելի լաւ պիտի ըմբռնէր իր արուեստը, թանկագին տուփ մըն էր նէ՛ լի պսպղուն և հաղուստեղիտ գոհարներով, զորս նէ գրեթէ ուրախութեամբ կը ծածկէր, գուցէ անգիտակից, գուցէ համեստ, գուցէ տհաճ ժողովրդականութենէ՝ որ գովեստներով իսկ կը պղծէ գեղեցիկ բաները»:

Ատա նէկրի կը գրէ. «... Մեռնողը՝ մեր բանաստեղծութիւններէն ամենէն աշխուհի և ամենէն մաքուրն էր, կը խօսին իր մասին իր քերթածները. կը խօսի իր մասին և վեցհարուածեանը՝ որով ինքզինքն սպաննեց իր կողակիցը, միշտակ մնալէն չափազանց վախնալով, ևն, ևն»:

Այսպէս և միւս բոլոր գրագէտներն ու գրագիտուհիները՝ իրեն մտերմ կամ ոչ աշխարհի զգացումներով տեսութիւններով կը խօսին Ողբացեալին առաքինութեանց և հանճարին վրայօք. որոնց կը ձայնակցի և իր թարգմանիչը՝ որ զինքը թէ՛ մօտէն և թէ՛ հեռուէն անընդհատ թղթակցութեամբ ճանչցած է, խառնելով իր արօցունքները թափուածներուն, յաւիտենական հանգիստ մաղթելով բարի և առաքինի հոգւոյն»:

Բայց աւա՜ղ որ օտար մամլոյ մէջ չը յիշուի այդ պաշտելի բանաստեղծութիւն հայ ծագում ունենալը, իտալացիք պարծանքով միմիայն իրենց ազգին կը վերագրեն զանի:

ՍԱՀՄ. ՌԱՄԿԱՎԱՐՆԵՐԸ
ՋՕՐԱՎԻԳ ԱԶԳ. ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան Ձմեռնային ակումբը հետեւեալ նամակը ուղղած է Կ. Պոլսոյ Ս. Պատրիարքին:

Ամենապատիւ
Տ. Եղիշե Արքեպ. Դուռեան
Պատրիարք Հայոց եւ Նախագահ Ազգ. Ներսիս Ժողովոյ
Կ. Պոլիս

Սրբազան Հայր,

Սահմանադրական-Ռամկավար Կուսակցութեան Իգմբիթի Ակումբս պարտք կը դրայ ներկայիւս գիմել Ձեր Սրբազնութեան՝ արտայայտելու համար տեղւոյս Հայ հասարակութեան գիտակից տարբերուն վրդովուած զգացումներն ու անձկոտ մտահոգութիւնները՝ հանդէպ այն տիպէր իրաւագործութեանց, որոնց թատր եղան մեր ազգային վարչական շրջանները կարգ մը ամբոխավար կուսակցականներու սանձարձակ կամայականութեան երեսէն:

Վերջերս, եկեղեցիներու մէջ միթիւն կի խնդրոյն առթիւ, քաղաքիս ազգ. իշխանութեան օրինաւոր սրբուհիներուն դէմ տեղի ունեցած կուսակցական բռնաբարիչ ընթացքներ մեզ այն եղբայրացութեան յանգիլ կը ստիպեն. թէ մեր ազգային կեանքը քաոսի ու անիշխանութեան պիտի վերածուի. եթէ մեր Ազգ. Կեդր. Վարչութիւնը, որուն կը նախագահէ Ձեր Սրբազնութիւնը, կարուկ ու վճռական քայլեր չառնէ օրէնքը ամէն գնով յարգել տալու համար:

Մենք կը կարծենք, թէ Ազգ. Սահմանադրութիւնը ծաղր մը պիտի ըլլար, եթէ անոր գործադրութիւնը չապահովուէր ազգային իշխանութեանց կողմէ—սկսեալ Կեդրոնէն մինչև գաւառի յետին Առաջնորդութիւնը—օրինական բոլոր միջոցներով:

Ցաւ ի սիրտ կը դիտենք. թէ մեր ազգային կեդրոնական իշխանութիւնը պէտք եղած կ'որովը ցոյց չի տուաւ ցարդ ազգային հաստատութեանց դէմ պարտաւորութիւնները զսպելու և սահմանադրական ժողովներու և վարչութեանց հեղինակութիւնը հարկադրելու համար:

Սահմանադրական-Ռամկավար Կուսակցութեան Իգմբիթի Ակումբս՝ տեղւոյս հայհասարակութեան ընդհանուր զգացումներուն ու համոզումներուն թարգման կանգնելով որ վերջ մը տաք այն վարանոտ քաղաքականութեան, որուն կը հետեւի կեդրոնի մեր ազգային իշխանութիւնը, և որուն հետեւանքով ժողովուրդին մէջ կը յաւերժանան կարգ մը գայթակղիչ խնդիրներ և սպառնալիքներ:

Ազգային հաստատութիւնները պէտք է զերծ մնան կուսակցական միջամտութիւններէ և ազդեցութիւններէ և միմիայն ազգային սահմանադրական մարմիններու օրինաւոր իրաւասութեանը ենթարկուին:

Սահմանադրական-Ռամկավար Ակումբս իր բոլոր միջոցներովը դժուարի պիտի կանգնի ազգային ներքին կարգապահութեան այսպիսի վճռական ճիգի մը, որուն նախաձեռնութիւնը կը սպասէ ազգային վարչական մարմիններէն, իրեն վերապահելով իր գործունէութեան սահմանին մէջ չէզոքացնել անոնց դէմ յարուցուած արգելքներն ու ապօրէն ընդդիմութիւնները:

Ազգային խղճմանքին վրայ ծանրացող այս ցաւոտ հարցերուն նկատմամբ մեր անվերապահ տեսութիւնները Ձեր սրբաշնորհութեան պարգեւով կը մնանք:

Որդիական ամենախորին յարգանքներով

Ս. Ռ. Կ. ԻԶՄԻՐԻ ԱԿՈՒՄԲԻՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ
25 Յունիս 1910 (Կնիք)
Իգմբիթ

ՉՄԻՌՆԻՈՅ ՑԱՒԱԼԻ ԴԵՊՐԵ

Պուլկ. հեռագր-գործակալութիւնը համառօտ կերպով հաղորդած էր թէ Դաշնակցականը Չմիւռնիոյ հայոց եկեղեցւոյն մէջ միթիւն ընելու համար ժողովուրդին հետ ընդհարում ունեցած և քանի մը մարդ սպաննած ու վիրաւորած են:

Բշ. Բիւզանդիոնի մէջ ալ կը կարգանք հետեւեալը այդ ցաւալի դէպքի մասին:

«Ամեն գնով» եկեղեցիներու մէջ միթիւն գումարելու մասին կուսակցականաց յամառութիւնը տուաւ իր հաւոր արդիւնքը: Իգմբիթն երէկ քուտացուած հեռագրիներ, որոնք կ'արկնոտեն ամէն ճշմարիտ Հայու սիրտ, կ'զուժեն բոլորն արիւնալից կռիւ մը, որուն զոհ գացած են մէկ քանի հայորդիներ: Բոլոր հեռագրիներն ալ կը հաստատեն թէ այս եղբայրասպան կուսակցականաց եղած է կուսակցական գործիչ Նալպանտեան, ուղեւոր անպատճառ բանախօսել եկեղեցիին մէջ հակառակ հայրապետական արգելքին և Ազգ. Վարչութեան բացարձակ որոշման, որով ամէն աշխարհիկ գումարում կ'արգելուէր սրբավայրերու մէջ և Աւասիկ Հ. Ս. Ռամկավար Կուսակցութեան Իգմբիթի ճիւղին մեզ զրկած հեռագիրը:

ԻԶՄԻՐ, Յուլ. 18.

«Այսօր պատարագէն վերջը, դաշնակցական ժողովրդական քօմիտէի կեղծ անունին ներքեւ, ուղեցին անպատճառ միթիւն գումարել Ս. Ստեփաննոս եկեղեցիին մէջ: Ներկայ ժողովուրդը արգելք հանդիսացաւ իրենց անմիջապէս դուրս հաննց զիրենք եկեղեցիէն, ու փակեց եկեղեցիին դուռները: Դաշնակցականը եկեղեցիին բակին մէջ յառաջ բերին կռիւ մը, որուն միջոցին սպաննուեցաւ Գեորգ Բէշիշեան, ատրճանակի երկու հարուածով, երբ կը յորդորէր կատաղած մարդիկը հանդարտիլ. իսկ Պօղոս Հալաճեան ծանրապէս վիրաւորուեցաւ. երբ կը ջանար ձեռքակալել ոճրագործը, Երկու զոհերն անգամ են Ռամկավար կուսակցութեան տեղւոյս գործադիր մարմինոյ: Այս կուսակցութեան ներկատեղաւորները բնաւ զէնք չգործածեցին առաջուց գործադիր մարմինոյ կողմէ տրուած բացարձակ հրամանին համեմատ: Սպաննուեցաւ նաև յոյն աղջիկ մը՝ մոլորած գնդակէ մը: Բոլոր Հայ ժողովուրդը բուռն վիշտի ենթարկուած է այս վատ ոճիւններուն վրայ: Տարաբախտ Բէշիշեանի յուղարկուորութիւնը պիտի կատարուի վաղը»:

Ռամկավար Կուսակցութիւն

—Բիւզանդիոնի Գշ. թիւին մէջ կը կարդանք, թէ «Յաւօք կը տեղեկանանք Իգմբիթն այս գիշեր եկած հեռագրէ մը թէ երեք նոր սպանութիւններ տեղի ունեցեր են կուսակցական խնդրոյ պատճառաւ բայց մանրամասնութիւնք չեն կը պակսին»:

—Սահ. Ռամկ. Կուսակցութեան Կեդրոնական Ակումբը յայտարարութիւն մը հանած է որով ողբալով իր ընկերներէն Գեորգ Բէշիշեանի Չմիւռնիոյ մէջ դաշնակցականներէ սպանուելը, իր զրդուանքը կը յայտնէ այդ ոճիւն թիւազրիչներուն դէմ, կոչ կ'ընէ Ազգ. իշխանութեան կողմի ընթացք մը բռնելու այդ եղբայրասպաններուն դէմ, և «կուսակցութեան արեւելի զոհին նուիրալիտ արեւան վրայ, միշտ և աւելի եռանդով վարել իր ստանձնած ողբալի ներքին ինքնապաշտպանութեան գործը որ ուրիշ բան չէ. բայց եթէ ամէն գրեթէ պաշտպանութիւն Ազգ. Սահմանադրական-Ռամկավար Կուսակցութեան Իգմբիթի Ակումբս պարտք կը դրայ ներկայիս գիմել Ձեր Սրբազնութեան՝ արտայայտելու համար տեղւոյս Հայ հասարակութեան գիտակից տարբերուն վրդովուած զգացումներն ու անձկոտ մտահոգութիւնները՝ հանդէպ այն տիպէր իրաւագործութեանց, որոնց թատր եղան մեր ազգային վարչական շրջանները կարգ մը ամբոխավար կուսակցականներու սանձարձակ կամայականութեան երեսէն: Վերջերս, եկեղեցիներու մէջ միթիւն կի խնդրոյն առթիւ, քաղաքիս ազգ. իշխանութեան օրինաւոր սրբուհիներուն դէմ տեղի ունեցած կուսակցական բռնաբարիչ ընթացքներ մեզ այն եղբայրացութեան յանգիլ կը ստիպեն. թէ մեր ազգային կեանքը քաոսի ու անիշխանութեան պիտի վերածուի. եթէ մեր Ազգ. Կեդր. Վարչութիւնը, որուն կը նախագահէ Ձեր Սրբազնութիւնը, կարուկ ու վճռական քայլեր չառնէ օրէնքը ամէն գնով յարգել տալու համար: Մենք կը կարծենք, թէ Ազգ. Սահմանադրութիւնը ծաղր մը պիտի ըլլար, եթէ անոր գործադրութիւնը չապահովուէր ազգային իշխանութեանց կողմէ—սկսեալ Կեդրոնէն մինչև գաւառի յետին Առաջնորդութիւնը—օրինական բոլոր միջոցներով: Ցաւ ի սիրտ կը դիտենք. թէ մեր ազգային կեդրոնական իշխանութիւնը պէտք եղած կ'որովը ցոյց չի տուաւ ցարդ ազգային հաստատութեանց դէմ պարտաւորութիւնները զսպելու և սահմանադրական ժողովներու և վարչութեանց հեղինակութիւնը հարկադրելու համար: Սահմանադրական-Ռամկավար Կուսակցութեան Իգմբիթի Ակումբս՝ տեղւոյս հայհասարակութեան ընդհանուր զգացումներուն ու համոզումներուն թարգման կանգնելով որ վերջ մը տաք այն վարանոտ քաղաքականութեան, որուն կը հետեւի կեդրոնի մեր ազգային իշխանութիւնը, և որուն հետեւանքով ժողովուրդին մէջ կը յաւերժանան կարգ մը գայթակղիչ խնդիրներ և սպառնալիքներ: Ազգային հաստատութիւնները պէտք է զերծ մնան կուսակցական միջամտութիւններէ և ազդեցութիւններէ և միմիայն ազգային սահմանադրական մարմիններու օրինաւոր իրաւասութեանը ենթարկուին: Սահմանադրական-Ռամկավար Ակումբս իր բոլոր միջոցներովը դժուարի պիտի կանգնի ազգային ներքին կարգապահութեան այսպիսի վճռական ճիգի մը, որուն նախաձեռնութիւնը կը սպասէ ազգային վարչական մարմիններէն, իրեն վերապահելով իր գործունէութեան սահմանին մէջ չէզոքացնել անոնց դէմ յարուցուած արգելքներն ու ապօրէն ընդդիմութիւնները: Ազգային խղճմանքին վրայ ծանրացող այս ցաւոտ հարցերուն նկատմամբ մեր անվերապահ տեսութիւնները Ձեր սրբաշնորհութեան պարգեւով կը մնանք: Որդիական ամենախորին յարգանքներով Ս. Ռ. Կ. ԻԶՄԻՐԻ ԱԿՈՒՄԲԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ 25 Յունիս 1910 (Կնիք) Իգմբիթ

նադրութեան ամեն զնով անոր ընդ-
գիմալ որոշած տարրերուն դէմս»
Յաջողութիւն և յարատեւութիւն կը
մտղենք:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Վառնայաբնակ այս ու այն ան-
հատն ու խումբէն նամակներ կը-
տեղան խմբագրատունս հրատա-
րակելու խնդրանք. ատենց մէ-
շատը ծանօթ երաժշտի և լուսա-
րորի խնդիրներուն շուրջը գառ-
նալով այլևս կը մերժենք հրա-
տարակել Այդ ըստ ինքեան լո-
կաբեր խնդիրներու մասին մեր
կարծիքը արդէն յայտնած և ժո-
ղովուրդն ալ բոլոր բաւականի գա-
ղափար կ'ազմած ըլլալով և եւրոպե-
կը դատենք նորէն յուզել մըտ-
քերը:

Այժմ քաղաքիս համար կարե-
որագոյն խնդիրը յաւանքիկա տա-
րեշնչանին Ազգ. Վարժարանի տր-
ուելիք ուղղութիւնն է: Ամէնքս
գիտենք թէ 3—4 տարիէ ի վեր
մեր վարժարանը շատ անհախան-
ձելի վիճակի մը մատնուած է ու-
սումնական ու կրթական տեսա-
կէտով:

Քանի մը տարիէ ի վեր գոր-
ծադրութեան դրուած մեր կրթա-
կան ծրագիրը անբաւական և ան-
համապատասխան է մեր տղայոց
պէտքին: Այդ ծրագրով ընդու-
նուած չորս տարեշնչանին մէջ
մեր փոքրիկները ելկու տող հայե-
րէն գրել իսկ չեն կրցած սով-
որիլ ոչ ալ աղագային գիտելիքի
վրայ որոշ գաղափար մը առնել:
Փրանսերէնը, գրաբարի նախա-
գիտելիքները և կրօնքը իսպառ-
վերցուած են տեղւոյս Ազգ. վար-
ժարանէն այնպէս որ ուռանց խղ-
ճահարութեան կրնամ ըսել թէ
տարեկա՝ 8—10 հազար ֆր. ծախ-
քը յուժաշտս կը վատնուի կոր:

Նոր Դպրոցասիրաց ընկերու-
թեան մը կազմութիւնը ուրախա-
լի երևոյթ մըն է: Այս ընկերու-
թիւնը նիւթապէս պիտի ստա-
րէ հոգաբարձութեան անոր (ննա-
յողական միջոցներ և նոր հա-
սոյթներ ցոյց տալով Ապահովա-
պէս ժողովուրդը անդամակցու-
թեամբ և նախարարութեամբ
պիտի քաջալերէ ընկերութիւնը:
Բայց մեր ցաւը, մեր իսկական
ցաւը նիւթականին մէջ չէ, այլ
ուսման ծրագրին և կրթական ե-
ղանակին մէջ: Մեր վարժարան-
ները եթէ այս վերջին տարի
ները արդիւնք չունեցան, պատ-
ճառը դրամի պակասը չէր, այլ
ընդունուած ծրագիրը, ուսուցիչ-
ներու պարտազանցութիւնը և
հոգաբարձութեան անտարբեր վե-
րաբերումը:

Արդ, յառաջիկայ տարեշնչան-
ները արդիւնաւոր ըլլալու հա-
մար, գլխաւորապէս յետագայ
երէք պայմանները լրացնել հաւի-
ն:

Ա. կրթական ծրագրի բարե-
փոխում և շրջանի յաւելում:
Բ. Չեռնհաս և անձնուէր ուսու-
ցչներու ընտրութիւն:

Գ. Հոգաբարձութեան կազմին
մէջ կացող և յարստեական ոգի
ունեցող մէկ քանի անձնաւորու-
թիւններու ներմուծում:

Այս երեք պայմաններուն ան-
միջապէս կը յաջորդէ չորրորդը,
նիւթականը, զոր լրացնել կոչուած
է նորակազմ Դպրոցասիրացը, ո-
րուն յաջողութիւնը սակայն կա-
խում ունի վերի երեք պայման-
ներու լրացումէն:

Տեղւոյս Ազգ. Վարժարանին հա-
մար տարեկան 10,000 ֆր. պիտ-
ծէ մը ունենալ շատ հեշտ է այս-
օրուան վիճակով, պայմանաւ որ
թաղ. Խորհուրդը վաղ անցնի այն
անտեսեալ գիտական ուղղութե-
նէն, զոր ունի բաւական տարի-
ներէ ի վեր օրական միջին հաշ-
ւով ժամ մը աշխատութիւն ունե-
ցող քարտուղարի, երաժշտապետի
և լուսարարի զատ զատ լիաբուն
ամսականներ վճարելով: Հոգա-
բարձութիւն և թաղականութիւն
համերաշխելով, կարող են այդ
երէք պաշտօնները միացնել ու
սուցական պաշտօններու ամսա-
թոշակի աննշան բարգումով մը
այլապէսով ճիշդ երկու ուսուցիչի
տարեթոշակ կը շահուի: Բաւական
է որ գիտնանք գործիւն
հաւար մարդ փնտռել և ոչ թէ
մալդուն համար գործ:

ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉ ԱՌԱՆՑ ԾԱԽԲԻ ԵՒ 500 ՓՐ. ԾԱՀ ԱՁԴ. ՄՆՏՈՒԿԻՆ

Մօտէն տեղեկանալով թէ հո-
գաբարձութիւնը և թաղականու-
թիւն Ազգ. Վարժարանի պիտու-
ին մէջ Մանկապարտէզին համար
ալ ծախք կը կանխատեսեն որոշ
գումար մը, կուգամ հրապար-
կաւ յայտարարել թէ ես պատ-
րաստ եմ պատասխանատուու-
թիւնը ստանձնել Ազգին օգտա-
կար հետեւեալ պայմաններով:

1) Երկու վկայեալ մանկապար-
տէզականուհիներու ի հարկին օգ-
նականի մըն ալ ամսաթոշակները
ես կը վճարեմ:

2) Տարին 500 ֆր. ժող հա-
սոյթ մըն ալ ազգային սնտուկին
կուպանովեմ առանց ո' և է ծախք
պատճառելու անոր:

3) Ազգ. Վարժարանին վարի
երկու օրհանրակրկին ըստ ա-
ռաջնոյն Մանկապարտէզին յատ-
կացուին և վարժարանի տնտեսին
պարտականութիւնը ըլլայ զանոնք
աւելել ու մաքրել:

Եթէ հաճոյ թուի Պատ. Հո-
գաբարձութեան իմ այս ազգո-
գուտ առաջարկը, կրնայ բանակ-
ցիլ իրաւունքի Տ Խճագրին հետ,
որուն լիազօրութիւն տուած եմ
ինձ փոխանորդելու:

ՈՅՈ

Ն Ե Ր Ք Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Պուկարական թերթերէ կը տեղե-
կանանք թէ Տէմիւն — Տօպրիչի երկաթու-
գոյ գիծը գրեթէ պատրաստ է: Այդ
գիծը շինող ընկերութեան յատուկ դոր-
ծերուն համար գրեթէ ամեն օր կառա-
խումբեր կերթեն և, որոնք մասնա-
ւոր արտօնութեամբ կերթան մինչև
Տօպրիչ. իսկ կանոնաւորապէս և առանց
յատուկ արտօնութեան կերթան այդ
քաղաքին մինչև երկու քիլոմէթր մօտը:
Մինչև յառաջիկայ Սեպտեմբերին գիծը
պաշտօնապէս պիտի սկսի շահագործ-
ման դրուել:

—Վառնայի փողոցներու կանոնաւոր-
ման, ջրանցքներու շինութեան ինչպէս
նաե ջուր բերելու նպատակաւ թաղա-
պետութեան կողմէն արկէ առաջ և-
ղած փոխառութեան գումարները ար-
դէն մեցած ըլլալուն, մասնաւոր նկա-
տի առնելով այդ գումարներուն սահ-
մանուած գործերը տակաւին վերջա-
ցած չըլլալը և թէ թաղապետութեան
կանոնաւոր եկամուտի աղբիւրները այդ
հաշիւին գործերու նիւթական պահան-
ջին գոհացնելու անբաւական ըլլալը,
վառնա հրատարակուող «Սօպոստէն
կլաւ» պուկարական թերթը Խորհուրդ-
կուտայ թաղապետութեան որ փութայ
նոր փոխառութիւն մը կնքել, պակաս
թողած գործերը վերջացնելու և հե-
տեապէս վառնայի իր ներկայ կիսաւեր
վիճակէն ազատելով ճշմարիտ եւրո-
պական քաղաքի մը երևոյթը արուե-
լու համար:

Մասնաւոր աղբիւրներէ մեր առած
տեղեկութեան նայելով, թաղապետու-
թիւնը արդէն որոշած է եղբր այդ նը-
պատակաւ 2—3 միլիօն ֆրանքի փո-
խառութիւն մընել:

Սօֆիայ երկաթուղւոյ անօրէնութեան
կողմէն կառախումբերու երթևեկու-
թեան նոր ժամանակացոյց մը պատ-
րաստուելու վրայ է յառաջիկայ նոր
եղանակին համար որ կսկսի սկստեմ-
բեր ամիսէն: Այդ ժամանակացոյցի հա-
մաձայն կառախումբերը ոչ միայն ա-
ւելի արագ ճամբայ պիտի առնեն, այլ
և օրուան մէջ մինչև ցարդ երթևեկող
կառախումբերուն վրայ մէկ մէկ գը-
նացք ալ պիտի աւելնայ, հսկէ զոր կը
ծրագրուի նաե Սօֆիա—Վառնա և
Սօֆիա—Պուրկազ գծերուն վրայ ճե-
պընթաց կառախումբեր ևս հաստատել:
Բայց այս խնդիրը կապ ունի եւրոպա-
յան ձնաքարուած արագաշարժ լօթօմօ-
թիֆներ և հետ, որոն ինչպէս կերե-
թիւներ որոնք հոկտեմբեր—նոյեմբերէ
առաջ չ'պիտի կրնան հասնիլ:

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Վեհ, կաթողիկոսը Տփղիսի մէջ ան-
ձամբ տեղեկութիւններ քաղեց Կով-
կասիայոց զարգացման սատարող ըն-
կերութիւններու և հաստատութիւննե-
րու գործառնութեանց և վիճակի մա-
սին: քաջալերեց մասնաւորապէս Գրե-
ղատնտեսական և Բարեգործական ըն-
կերութիւններու վարիչները:

Յուլիս 13 ին Նորին Վեհափառու-
թիւնը Տփղիսէ մեկնած է Էջմիածին
վերադառնալու համար:

—Ատանացի անցորդ մը որ Չարդի
բողոք արհաւիրքը անձամբ կրած է,
ճշգրիտ մանրամասնութիւններով մեզ
պատմեց թրքական այդ աշխարհա-
ցունց ոճրագործութիւնը և ի մէջ այ-
լոց ցոյց տուաւ թէ ինչպէս «ազատարար
բանակի» զինուորները, համախորհուրդ
Ատանայի քաղաքական և զինուորա-
կան բարձր պաշտօնէից հետ, բերա-
ւոր սուտ խոստովանելով և երգում:

ներով Հայոց զէնքերը ժողովել վերջ,
բոլոր հայերը թաղէն դուրս հանած և
քաղաքէն փոքր ինչ հեռան գանուող
գործարանին մէջ փակած են, որպէսզի
առանց զօտաւարութեան հայոց բոլոր
առնները և խանութները կողոպտեն և
յետոյ այրեն, Հայոց ինչքը իրենց մէջ
բայ—բաժին ընելին ծածկելու համար:
Յեղեց նաե թէ Պուրէն երբ հեռագիր մը
հաղորդեց թէ շահաւարձները կացութե-
ան տէրն եղածն, ամիջապէս նոյն
զինուորները կործանեցին այն յաղթա-
կան կամարը որ կառուցուած էր Սահ-
մանաւորութեան հեշտման ի յիշատակ
և որուն ծախքը մեծաւ մասամբ Հո-
յիւրը նուիրած էին: Սյը օրը նոյն
կամարի փլատակներուն մէջէն անցը-
նելով Հայերու կրօնանք, ասոնց ստի-
պած են նոյն «ազատարար» զինուոր-
ները երէք անգամ «բաժնի շահմըզ
չօ' գեաշա» պատալու, այս բացազան-
չութիւնը ընել զփկամակողին սուրի
հարուածներ սպառնալով:

—Դաշնակցական ծանօթ գործիչ Ակ-
նուրի որ Օսմ. Սահմանադրութեան հո-
շակումէն յետոյ Պոլիս երթալով, դաշ-
նակցականները կը զեկավարէր, իր այդ
ղբալման մէջ ժամանակ գտնել պար-
կեշտ ընտանիքէ այլ օրերուներ ալ
զեկավարելու, որով յաջողեց է հան-
գուցեալ ուսուցչական Պէրպէրեանի
աղկան խելքը գործնալ և օրին մէկը
զանր Պոլսէն շեռացնել: Թղթակից մը
Խարիզը մէջ այդ երկուքը միասին տե-
սեր է գիշեր ատեն և հետեւեալ է անոնց
մինչև պանդուկ:

Պուրէն նոր եկող մը կը պատմէ լի-
տեղոյն դաշնակցականները կրօն և-
ղեր թէ Կ. Սկստեմբերի մէջ քա-
ղաքական ամուսնութիւն պիտի կնքէ
յիշեալ օրերուին հետ:

—Պատրիարքը Վարչապետ Հազգը
փալային ներկայացուց հայերէ գրաւ-
ուած և յախտակուած հողերու ցու-
ցակները, և պնդեց թէ ազգին համար
էական կարեւորութիւն ունեցող այս
խնդիրը պէտք է ժամ առաջ կարգա-
դրէ կառավարութիւնը: Պատրիարքը
յիշեց նաե թէ դատարաններ մէջ կարգ
մը չարագործներ սպանութիւններ կը
գործեն և բռնաբարութիւններ կը փո-
ծեն, բայց ասոնք անպատիւ կը ձգուին,
որով կառավարութիւնը անուղղակի
կերպով քաջալերած կ'ըլլայ այդպիսի-
ները, ուստի յանուն ազգին խնդրեց
որ այս վիճակին դարման մը մտածուի:
Վարչապետը խոստացաւ գործը անգամ
մըն ալ նախարարաց խորհրդոյ նկա-
տածման յանձնել և նոր տնօրինու-
թիւններ ընել:

—Միացեալ Ընկերութիւնը կը դրա-
ղի կարնոյ մէջ ուսուցչանոց մը հաս-
տատուու:

—Քէօստէնէի և Կալացի նոր թա-
ղականաց ընտրութիւնները վառնա-
ցուցան կեդր. Վարչութիւնէն:

—Կիրակի օր Բերայի եկեղեցիին մէջ
կուսակցականք կրկին բանախօսութիւն
ընել փորձեր են, բայց պատարագը լրա-
նալէ յետոյ ժողովուրդը իր ձեռքով ան-
միջապէս փակեց է տաճարին դռները,
եկեղեցիի բակին մէջ ձեռկուռք տեղի
ունեցեր է:

Բերայի արհեստաւորներու կողմէ
Պատրիարքին խնստ բողոք մը ուղ-
ղուած է, որով կը պահանջեն ըստ Վեհ.
կաթողիկոսի կոնդակին և ըստ լզգ.
վարչութեան որոշման եկեղեցիներ մի-
անգամ ընդ միջոյ փակել ու է բանա-
խօսութեան առջև, խոստանալով այս
որոշումը անսատուներուն դէմ ժողու-
վրդական ուժով պաշտպանել եկեղե-
ցին և Ազգ. Պատրիարքարան: արժա-
նապատուութիւնը:

